ՀԻՆԳՇԱԲԹԻ—2—ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՓԱՆԵԻԻՆՆԵՐՈՒԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2735

Ն.—Տ.—14—ՀՈԿՏԵՄԲԵՐ—1880

ԳԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 40 Մէջ.
» » Գաւառաց » 12 »
Վեցամս. » Կ. Պոլսոյ » 3 »
» » Գաւառաց » 6 »
Օտար երկիրներու » 21/2 Լիրա
Մասնաւոր տողը մէկ անգամի համար 3 դրուշ, երկու անգամի համար 2 դրուշ է. աւելի անգամներու համար գաղ տարկութիւն կը լինի։
Մէջն մի թիւ 40 փարա արժէ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳՈՒՅՍ ԱՆԴԵՐՁՈՒԹԻՒՆ

Դուրս գնացած լրագրաց ճանրու ծախքը Խմբագրութիւնն վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն Խմբագիր—Ցիորէնիդ ապարանը գրուի։ Գաղտիա Սանդրքարը Ճանապարհ թիւ 168, Նորօ խան. Մասիսի գրատունակը։
Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունիր։
Չգրաստած նամակներ չեն տրուիր։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս տողերս հոսած հեռագիրներ

Ամէնք 13 հոկտ.

Յունաստանի թագաւորն և թագուհին երէկ Նոմոլիէն մեկնեցան, և պատանի Ամֆիթրիթ չոգենաւով Փարֆա հասան, ուսկից վագր կը մեկնին Ամէնք վերադառնալու համար։

Կը հաստատեն թէ Հելլենական կառավարութիւնն Յունաստանի Ազգային պանքայէն 2 0/0 տոկոսով 60 միլիոն ֆրանքի փոխառութիւն մը կնքեր է դրամով վճարելի, և 1 0/0 տոկոսով 25 միլիոնի փոխառութիւն մը տասնակօք վճարելի։

Հռոմ. 13 հոկտ.

Կը հաստատեն թէ Հռոմի Օսմ. երկրորդ ատիճանի դեսպանութիւնն ի մօտոյ առաջին ատիճանի դեսպանութեան պիտի վերածի։

Լոնդրա 13 հոկտ.

Անգլ. Բոնս.	98 5/16
Օսմ. »	10 1/8

Փարիզ 12 հոկտ.

Օսմ. Բոնս.	10.15
» Երկրաւորք	30.25

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական Հրամանատ՝

Տրապիզոնի վճռաբեկիչ (Իսթինաֆ) ատենին նախագահ Բէյ ֆէնդի՝ Վանայ վճռաբեկիչ ատենին պատժական ճիւղին նախագահ անուանեցաւ։

Տուլչինեայի խնդրոյն կարգադրութեան պարագաներն հետեւեալ կերպիւ կը համառօտէ Ֆոր ոֆիս Պոսֆոր։

«Սեպտ. 24ին (6 հոկտ.) էր որ Պ. Կլատսթոն ուսկից խնդրոյս ամբաստանեալ իւր պատրաստած և Բրիտանական նախարարաց խորհրդէն ընդունուած նոր ծրագիրն հաղորդեց տէրութեանց։ Այս ծրագիրն արդէն ծանօթ լինելով հասարակութեան, հարկ չկայ նորա մանրամասնութիւնները տալու, մանաւանդ որ վաղուայ իսկ է նորա խօսքն ընել, և Լա Թիւրքիի գլխուն եկածը մեզ ամէն ժամանակ աւելի խոհեմութեան կը պարտաւորէ։

«Սեպտ. 26ին բարձր տեղ մ'եկած հեռագիր մը նշմարել կուտար թէ Անգլիոյ և Ռուսիոյ կողմէ առանձին դործողութեան մը հընարաւորութիւն կար, և բացայայտ էր որ Եւրոպական կառավարութիւնք հանդուրժութիւն կուտային Պ. Կլատսթոնի առաջարկին, և կը հաճէին դործադրութեան պատուիրակութիւն տալ յիշեալ երկու մեծ տէրութեանց։

«Այս լուրը Կ. Պոլիս հասնելուն պէս՝ նախարարաց խորհուրդը դումարեցաւ և որոշեց Տուլչինեան առանց պայմանի յանձնելով՝ տէրութեանց բանակցութիւնները կարճ կտրել։ Հետեւապէս, արտաքին դործոց նախարարն անցեալ շաբաթ օրը մեծ տէրութեանց դեսպաններուն ղրկուեցաւ այս որոշումը կէս պաշտօնաբար իմացնելու և նոցա տրամադրութիւնն հանկնալու։ Դեսպանք, որք առկախ խընդրոյս խաղաղութեամբ լուծուելուն կը փափաքին, դոհութեամբ ընդունեցին Ասիմ փաշայի տաւած լուրն, և Ն. Վսեմութիւնը խոստացաւ Դրան որոշումը նոյն օրը ծանուցադրով իրենց հաղորդել։

«Արդարեւ Դուռը նոյն օրը նախարարաց խորհրդոյն տեղեկագիրը կայսերական պալատը ղրկեց։ Վեհ. Յուլթանին հաւանութիւնն առնելու համար, բայց կայսերական հրամանագիրը չեղաւ ոչ կիրակի, ոչ երկուշաբթի օրն, և ղրոյց կը պատրաստը թէ Դուռն իւր որոշումն ետ առեր էր, և թէ Տուլչինեայ չպիտի յանձնուէր։ Բարեբաղդաբար այս ղրոյցը չհաստատուեցաւ, և երեքշաբթի առաւօտ մեծ տէրութեանց դեսպաններն ստացան արտաքին գործոց նախարարին խոստացած ծանուցադիրն, որոյ թարգմանութիւնն հետեւեալն է։

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Բ. Դուռն իւր անկեղծութեան և յօժարակամութեան նոր փորձ մը տալ ուզելով կը յայտնէ թէ որոշեց Գարատաղայոյ յանձնել զՏուլչինեայ։ Մանրամասն հրահանգներ ղրկուեցան ասոր համար տեղական իշխանութեանց։ Պիտի ի յիշեալ քաղաքն անմիջապէս յանձնեն խաղաղական միջոցներով։ Այն յանձնման պայմանները կարգադրելու համար պայմանագրութիւն մը կնքել պէտք պիտի լինի Դարատաղի հետ։ Բ. Դուռը նաւային ցոյցին առաջքն առնելու համար այս գոհղութիւնն յանձն առած լինելով, կը յուսայ որ տէրութիւնք դայս ի նկատ կառնուն, և նաւային ցոյցը բոլորովին ի բաց կը թողուն։

Վաղքի լրագիրն իւր այս աւուր թուով ալ բարեհորդմանց վրայ հետեւեալ աւետիսները կուտայ։

«Ինչպէս քանի մ'օրէ ի վեր կը յայտնեմք, Բ. Դրան արդի դրաղումը բարեհորդմունք են։

«Կը լսեմք թէ կարեւոր խորհրդակցութիւնք կը լինին հասութիւն այն մասին, ինչպէս նաև կեդրոնական դանձէն յատկացուելիք այն դումարին վրայ, որք բարեհորդմանց կարեւորագոյն ճիւղերէն միոյն, այն է՝ կրթական հաստատութեանց և հանրօգուտ շինութեանց պիտի գործածուին։

«Կը լսեմք նաև թէ տեղական երեւելեաց ժողովներուն (Իսթիյար Մէճլիսլէրի) պարտաւորութեանց և ձեռնհասութեան ատիճանին եկատմամբ ինչ ինչ նոր ծրագրեր ու գաղափարներ կան։

«Թաղապետութեանց, կամ քաղաքապետական շրջանակաց (տէվատիրի Պէլէտիյէ) կազմութիւնն ալ բարեհորդմանց գլխաւոր ճիւղերէն մին լինելով, կը լսեմք թէ այս նեկատմամբ յատուկ կանոնագիր մը կը պատրաստուի։

«Մինայն, կուսակալութեանց իշխանութեան ընդարձակմանը մասին նախարարաց միջև կարծեաց անհամաձայնութիւն մը կը տեսնուի, որ ծագում կ'առնու՝ տեղական ատիկանութեանց գլխաւոր հրամատարներուն (Ալայ Պէյի), ինչպէս նաև ուրիշ քանի մը պաշտօնատարաց՝ առանց կեդրոնին հաւանութեան պաշտօնի կոչուելու դործէն, և խնդիր է թէ արդեօք այդպիսի արտօնութիւն մը պէ՞տք է տալ կուսակալաց։

«Բայց և այնպէս, բարեհորդմանց փութով իրականացման ծառայելիք այլ և այլ ձեռնարկներ անմիջապէս կատարուելու վրայ են։

«Բարեկարգական լուրերէն մին ալ այս է որ Ժանտարմայի կազմութեան մանրամասնութեանը վերաբերեալ այլ և այլ ծրագրաց խմբագրութիւնը մատնախմբի մը պիտի յանձնուի, և Ժանտարմայի սպայից ընտրութեան մասին արդի օրէնքները պիտի բարեփոխեն։ Կ'ըսուի նաև թէ Ժանտարմայի գինուորաց և սպայից ամուսնութեանց վրայ պատշաճ քանակութեամբ յաւելուածներ մը պիտի լինի։»

Ֆրանքֆորտ—Թուրք. Օսմանլը լրագրոյն, որ շարաթն երկու անդամ կը հրատարակուի, այսօրուան թուոյն մէջ Հայոց դէմ բան մը չեմք տեսներ, որ հաղորդէր է։ Ընդհակառակն, Թէրճէմանը Հաղիգաթ լրագիրը, Բ. Դրան վերջին ծանուցագրոյն վրայ խօսելով—յորում առկախ խնդրոյս լուծման մէկ մէկ եղանակ առաջարկուած էր։—աւելի կը դանէ քանի մը տող գրելու Հայոց դէմ։

Թէրճէմանը Հաղիգաթ, Բ. Դրան այս ծանուցագրէն գոհ չեղողներուն վրայ խօսելով, նախ Յոյները հարուածելէ յետոյ, կը գրէ։

«Իսկ Հայ ազգասէրք կրնա՞ն հաւնիլ այս ծանուցագրին։ Յայտնի է որ նոցա փափաքը Անատոլուի մէջ բարեհորդմանց գործադրութիւնը չէ։ Անատոլուն եթէ Գրքոխա մ'անդամ լինի, նոքա գոհ չեն լինիր։ զի իրենց ուզածն է Աբեւելեան Ռումելիի նման ինքնօրինութիւն մը։ Մինչդեռ Պուլղարք այդպիսի ինքնօրինութիւն մը հաղորդուելու մասին արեամբ ձեռք կրցին բերել, այդ Հայ ազգասէրք դիտնալով որ Հայոց բան հաստատիմ ազգն այսպիսի շարժման մը չմասնակցեր, գոնե Եւրոպան այլ և այլ ուսերով խաբելու և այդ կողմէն ճեղում մ'ի գործ դընել տալու յոյսն ունէին։ Իսկ այս անգամ Բ. Դրան Անատոլուի համար յայտնած բարեհորդութիւնքը պարզապէս տեղական բարեհորդութիւնք լինելով, եթէ Եւրոպա այդ բարեհորդութիւնքն ընդունի և հաստատէ, Հայ ազգասիրաց այդ փափաքները բոլորովին կ'անհետանան։ Ասոր համար է որ Բ. Դրան վերջին ծանուցագրէն գոհ չեն լինիր։

«Այս Հայերն այժմ միակ մէկ դրաղումն էին։ զի այս մասին (Դրան ծանուցագրին եղած ընդունելութեան մասին) Եւրոպայէն դեսպան չուր մ'եկած չլինելով, ուրիշ բան չեն կրնար ընել։ Ռուսն միշտ սուտ լուրեր կը հնարեն իրր թէ Բ. Դրան այս ծանուցագրին Եւրոպայէն չէ ընդունուեր, և չպիտի ընդունուի եղեր, թէ Բ. Դուռն իսկ ետ առեր է եղեր դայն, կամ ետ առնելու վրայ է եղեր, եւ։ Ասանք Հայ ազգասիրաց բաղձանքներն են միայն, և ոչ թէ իրականութիւն, և եթէ այսպիսի խօսքեր կ'ընեն, իրենք զիրենք մխիթարելու համար է միայն։

«Մեք բոլոր այս ղրոյցներուն մէջ միայն կէտ մը վրայ ուշադրութիւն կ'ընեմք, այն է թէ կայսերական կառավարութեան վերջին ծանուցագիրը չհաւնողք՝ զայն չհաւնելու որոշ պատճառներ չեն կրնար յայտնել։ Ասանց բերանը պարաղ խօսքը սա է։ «Այս ծանուցագիրն հաւնուելու բան չէ։ Բ. Դուռն առաջ ամբողջ Եւրոպայէ դէմ ասպարէզ կը կարդայ, ևն» Այսպիսի անորոշ խօսքերով կը բաւականանան։ և մեկը չհամարձակիր Դրան ծանուցագիրը Պերլինի դաշնագրին յօդուածոց հետ բաղդատելով հաստատել թէ այս կամ այն կէտին վրայ հակառակ է այդ յօդուածոց սըրամտութեան։ Մեզ համար դաս հացուցիչ է այս վիճակը, զի կը յայտնէ թէ իրաւունքը մեր կողմն է, և իրաւանց պաշտպան Բարձրելոյն կրնամք յուսալ որ Եւրոպական դահլիճներուն մէջ ալ մեր թշնամիները նոյնպէս անկարող պիտի դտնուին չհաւնելու Բ. Դրան վերջին ծանուցագրին։»

Եւրոպական լրագիրք ամենք արդէն ծանուցեր էին թէ Պ. Կոչէն քիչ ժամանակէն պիտի մեկնի Կ. Պոլսէն։ Այդ պիտական դեսպանն ինք և նոներկայ պաշտօնն ընդունած ժամանակ յայտարարած էր իւր ընտրողաց թէ Խորհրդարանի յաւտիկայ բացման ներկայ պիտի դտնուի։ Վաղքի այս լուրին աւելի բացարշ հանդամանք մը տալով, կը ծանուցանէ այսօր թէ Ն. Վսեմութիւնը 6 շաբաթէն կամ երկու ամիսէն պիտի մեկնի Օսմանեան մայրաքաղաքէն, և Պ. Կոչէնի տեղ Լորդ Նէվիլը տը (Տ. Մակարտ՝.) Կ. Պոլսոյ Այդ դիտական դեսպան պիտի անուանի։

Վաղքի ժամանակէ մ'ի վեր մուցուած հանրածանօթ լուր մ'այսօր նորոգելով և աւելի շեշտելով կը ծանուցանէ թէ, ինչպէս որ սէրութեան երմնական պաշտօնատան մը համար Գերմանացի խորհրդական մը ընտրուած էր ասկէ առաջ, նոյնպէս արտաքին գործոց պաշտօնատան համար քանի մ'օրէն խորհրդական մը պիտի գայ Գերմանիայէն, որպէս զի «դարուս քաղաքակրթութեան պահանջած բարեհորդութիւնները ներմուծէ։։։։»

Կ'ըսուի թէ Սամսոն կղզոյն առջև Անդղիական նաւ մը պահանջուած տուրք մը չվճարելուն պատճառաւ արդելքի տակ դրուած լինելով, Անդղիական դեսպան Պ. Կոչէն բողոք է բարձեր Դրան մօտ։

Կայսերական «Ասիր» չոգենաւէն այս առաւօտ մայրաքաղաքիս նաւահանգստէն ճանրայ եկաւ՝ ուսուցուա և ուսուցիչներք տանելու համար այն Օսմանեան պատերազմիկ նաւուց, որք Միջերկրական ծովու մէջ և Ալպանիոյ ջուրերը կը դտնուին։

Հեռագրական դործեր ունեցողներուն համար կարեւոր կրնայ լինիլ դիտնալ թէ երէկուընէ սկսեալ, Բերայի հեռագրական կայարանն առջի տեղը փոխադրուած է, ի Թէրէպէ-պաշը, Օմէր Բայալի դիմացը։

Երէկ իրիկուն ժամը 4ին միջոցները մայրաքաղաքիս մեծագոյն նաւամատոյցին դիմացի նեղ և հին փողոցներէն միոյն մէջ հրդեհ ծագելով՝ 20 ի չափ տուն այրեցան։

Լա Թիւրքի լրագիրը 20 աւուր համար դադարման դատապարտեցաւ։ Պուքրէշի լրագրաց մէջ հրատարակեալ վերջին հեռագրերն ընդօրինակելուն պատճառաւ, այսինքն գրեթէ այն յանցանօք՝ որով Վաղքի նոյն պատժոյն ենթարկուած էր։ Բայց, գոհութեամբ կը լսեմք թէ, իւր թարգմանիչն նման, Լա Թիւրքի ալ ներողութեան արժանացեր է, և այսօր պիտի հրատարակուի եղեր։

Գալղարիոյ իշխանութիւնը դրամ կոխելու վրայ է, և այսպէս ինքնիշխան պետութեանց էական իրաւունքներէն մին ի գործ կը դընէ։ Պղինձէ, արծաթէ և ոսկիէ դրամներ ունենայ։ Դրամական միութիւնը պիտի լինի ֆրանքը (Լէվ)։ 20 ֆրանքնոց ոսկին՝ Ազէքսանդր պիտի կոչուի։ Դրամները փարիզ պիտի կոխուին ի հաշիւ իշխանութեան։

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՐԿԱՆ

Երէկ իրիկուն ժամը 10 ը 20 անցած կամուրջէն մեկնող և Ոսկեղջիւրի նաւամատոյցները դնացող Այա—Փաշու նոր չոգենաւը ներսի կամրջին առկէն անցած ժամանակ, մէկ կողմը կամրջին զարնուելով խարտակեցաւ, և նոյն հարուածին գորութեամբ միւս կողմն ալ նոյնպէս կամրջին բախեցաւ։ Չոգենաւուն երկու կողմն և վերը դտնուող բազմութիւն ճանրարդք ծովը թափեցան, և կարծելով թէ չոգենաւը կ'ընկղմի, մէջի ճանրարդներէն ալ շատեր ծովը նետուեցան։ Թէև ամէն կողմէ անմիջական օգնութիւնք հասան, բայց մի քանի մարդիկ խեղդուեցան, ուրիշներ ալ աւելի կամ նուազ կերպիւ վնասուեցան։ Այս արկածը պարզապէս նաւապետին համբակութեան կը վերագրի։

Երիկունն ստատելիք մարդիկ ուներով բազմութիւն ընտանիքներ՝ այս ցաւալի դէպքն խմնալով, Ոսկեղջիւրի այլեւայլ նաւամատոյցները խառնած, արիածով չոգենաւուն ճանրարդաց մէջ իրենց այրերը կամ զաւակները կը փնտռէին։ Սրատպիպ տեսարան մ'էր ասոր։ Աւելորդ է ըսել թէ քանի մ'ընտանիք այս գիշերը սուգի մէջ անցուցին։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կը լսեմք թէ անցեալ շաբթու մէջ վանաքարանի պարկերաւն մէջէն Տիգրանի Մշակ լրագրին վերջին թիւերը պարտնակող՝ ծրար մը հանուեր է մանքատան պաշտօնէից ձեռամբ, և Բ. Դուռը Տպագրական անհեակը գրկեր է քննուելու համար, այն ենթադրութեամբ թէ կայսերական կառավարութեան դէմ աղեալ հրատարակութիւնք կրնան դտնուիլ այդ Ռուսահայ թերթին մէջ։

Սայդ ադրիւրէ գոհութեամբ կը տեղեկանամք թէ Վեհ. Սուլթանն խմնալով որ Կիւրինի մէջ ընտիր երդեցողներ կը դտնուին որք հոս ծախուելու վրայ են, ատանց տեսակներն իւր քով բերել տուեր և մեծ հաճութիւն յայտներ է իւր երկրէն այսպիսի վաճառք երթալուն վրայ, ուստի թեղան գոհանակութեան և այլոց ալ օրինակ հանդիսանալու համար։ Յիշեալ կատուներէն յատուկ իրեն համար դրեան հրամայեր է։

(Մամուլ)

Գոհութեամբ կը տեսնեմք որ քանի մը յառաջդիմասէր ազգայինք եկատելով որ կրթութիւն ծաւալելու միջոցներէն մին ալ պարբերական ազգօգուտ հրատարակութեանց ծաւալումն է, որով այն հրատարակութիւնք ալ միանգամայն կը քաջալերին և կը յառաջդիմեն։ Այս Հանդէսէն մէկ մէկ օրինակ նուիրեր են Հայաստանի ազգային վարժարանաց համար։

ՊԱՂԱՔԱԿԱՆ

Եւրոպական աշխարհավարութեան վերջին անյաջողութենէն ետև տակաւին նոր բան մը չկայ բայց՝ ի լրագրական ոգեւորիչներէ և զրոյցներէ, որք երբեմն հարիւրին հարիւր անստոյգ կ'ելնեն։ Շքեղայէն առնուած տեղեկութեանց նայելով, վէզիր Բիզա փաշա ոչ միայն Ցուլչինեան Գարատաղի յանձնելու պատրաստուած չէր, այլ և ամեն միջոց ձեռք կ'առնուր Գարատաղցոց դիմադրելու համար։ Իւր հրամանաց ներքև 13 փաշա զօրք ունի, որք 8000 հոգիի չափ են։ 12 թնդանօթով։ 3 փաշաք եւս պիտի հասնէին։ այս կանոնաւոր զօրաց բանակին հետ պիտի միանային 10.000ի չափ Արպանիացիք և Օսմ. զօրքը 20,000ի պիտի հասնէր։ Բիզա փաշան Շքեղայի, Անթիվարիի և Ցուլչինեայի ճանապարհները դրաւած է։ Շքեղայի և Պոյանայի միջև 2400 ի չափ զօրք և 3 թնդանօթ կարգաւ շարուած են։ Կորիցայի և Ցուլչինեայի ճանապարհին վրայ երկու տեղ ամրութիւնք շինուած և 1700 զօրք դրուած են զանոնք պաշպանելու համար։ Իսկ Արպանիացիք Մագուրա Բլանինայի բարձունքը բռնած են։ Ցուլչինեայի մէջ 4300 Արպանիացիք և 1200 Օսմ. զօրք խիստ լաւ ամրացած գիրքերու մէջ են, նաւատորմին հուրէն հեռու։ այս զօրքը կրնայ դիմադրել Բէթրովիչի հրամանայ ներքև եղած Գարատաղցոց։ Ուրիշ բանակ մը կազմուած է Սանճիարճիոյի մէջ՝ կանոնաւոր զօրքերէ և Արպանիացիներէ բաղկացեալ։

Այս զօրութեանց նայելով, Սութորմանի մէջ գտնուած 3,000ի չափ Գարատաղցիք չեն կրնար յաջողութեամբ յարձակում ընել, մանաւանդ որ իրենց մէջ հիւանդութիւն ինկած է՝ մեծ մասամբ բայօղլայ բանակած լինելով։ Գարատաղի զօրքը զայրոյթ կ'զգայ Ցուլչինեայի համար նորէն պատերազմելու, զոր արդէն անգամ մ'առած էր, և որ յետոյ Թուրքիոյ վերադարձած է։ այս պատճառաւ Գարատաղցիք մեծ եռանդ մը չեն ցուցներ պատերազմելու։

Դալով Արպանիական միութեան, կ'երեւի որ Բրիստոնեայ ցեղերէն ոմանք, մանաւանդ Միրիթիները բաժնուեր և իրենց լեռները դարձեր են։ Սոնց իշխանը Բրէնք Ցո

պիսի ծերագրեր Ձեր առջև։» Ո՞չ սպնդքէն բոլոր մեր ոսկեդարեան մատենագիրք և ոսկեդարեան դիւցազունք, նաև Հոմերոս և Վիրգիլիոս, Միլտոն և Մասիլյոն, որք մէն մի ոսկեդար կ'արժեն իւրաքանչիւրն, ո՞չ ապաքէն դոքա բոլոր, եթէ Մխիթարեանց գործն ակնառուտես ըլլային, ոգեշնչման ու երախտագիտական արտասու օրպիսի համբուրեին Հայոց Արսէն Կոմիտաս Բագրատունու ճակատն, որ իրր անձնուրութիւնն է Մխիթարեան միաբանութեան։

Այո՛, թէև առերևոյթս օտար ազգային շարժման, սակայն այդ շարժման նախակարապետն իսկ է Մխիթարեան Միաբանութիւնն։ Մինոս Ձերազ Գօպոքն-Գլըպի մէջ պարծանօք կը հաշուէր երբ ամիսներէ յառաջ։ «Ժողովուրդ մը որ իրենց բնիկ լեզուին մէջ կարող է կարդալ Հոմերոս և Կիկերոն, Շեքսպիրը և Ցանդէ, Շիլլէր և Վիքտոր-Իւկո, չը կրնար անտարբեր մնալ այն մեծ սկզբանց որք դեպ ի նոր հորիզոններ կը մղեն Եւրոպան։»

Ո՞վ է որ մեր առջև պարզեց ազգային և արտաքին մատենագրութեանց գանձերն, այդ շնորհիւ նոր աչքեր ստացանք և նոր հորիզոններ կը նշմարեն։ այսօր։ • • •։ —Անմիտնե՛ր որք կը գտնեն թէ Հայկական խնդիրն անձնական, արուեստական գործ մ'է։ Հայկական խնդիրն այն օրէն ծնաւ ուր Մխիթարեանք տպեցին առաջին հայերէն ձեռագիրն զոր Հայաստանի աւերակաց և փոշեաց ներքևէն «երկիւղիւ և հաւատով» հանած, ի լոյս բերած էին։ Յիմարնե՛ր, որք երբէք խաղալիկ խնդրոյ ծագումն պաշտօնատանց մէջ կը փնտուէին։ որք Պարիսի քարանց մէջ կը փնտուէք այսօր Հայկական խնդրոյ ծագումն։ Եթէ գիտնայի՛ք թէ վարժապետներն ու գրագէտներն ինչ դեր կը խաղան աշխարհի մէջ։ թէ նոքա կը պատրաստեն ամէն ազգաց մէջ ամենամեծ յեղափոխութիւններն։ Եթէ գիտնայիք թէ այն անմեղ բանն, որ Բերլինատիպն կը կազմի և ուր բառերն կը հոլովին, որքա՜ն այդ լեզուի օրինադիրքն կը հոլովի, կը շարժէ, կը յեղափոխէ մտքերն ու սրտերն։ Արաբացիք Բանալի դիտութեանց (Մէֆ-ֆը-հ է-լ է-ը-մ) կ'անուանէին Բերլինատիպութիւնն։ Նոյնքան իրաւամբ չէ՞նք կրնար մեք ալ Հայաստանի բանալի կոչել Հայը Արսէնի Բերլինատիպութիւնն։

* * *

Ոմանք, ճանաչելով հանդերձ Մխիթարեան միաբանութեան անուրանալի և անփոխարինելի ծառայութիւններն, կ'առարկեն սակայն։ —Մխիթարեանք աւարտեցին իրենց գործն։ զի վերադարձաւ Հայոց համար ալ՝ գրականութեան և բանասեղծական շքնաղն, և աշխարհաբարեան ու գրական շքնաղն սկսաւ։

Ասի մեղ ալ բանաւոր առարկ մը կը թուի, թէև փոքր ինչ բացատրութեան կարօտ։

Արդարև կը փափաքէինք թէ Մխիթարեան Հարք աւելի մնաներ ժողովրդեան և աշխարհական դրագիտաց։ Աշխարհաբարն դրաբարէն չը խլուիր, և ո՛չ աշխարհականն կղերականէն։ Եւ չենք սխալիր ըսելով թէ, մեր դարուն ձգտումն ալ երկու տարրերն մերձեցնել է։

Երջանիկ ենք հաստատելով տես թէ մերձեցումն արդէն սկսած է վանքին և ընկերութեան, վենետկոյ վանքին և Հայ ընկերութեան միջև։ Եւ կը յուսանք թէ հեռի չէ ժամանակն, ուր պիտի աւելանք թէ Մխիթարեան միաբանութիւնն, առաջնորդ ունելով Հայրենասէրն Ալիշան, Հայաստանի հոգւոյն վրայ կը գտնուի, ուր ձեռադիր միայն կը հաւաքէր երբեմն, և ուր այժմ ձեռք կը կարկառէ Հայաստանի Ժողովրդեան՝ իր աւերակաց մէջէն վերականգնելու։ — «Բանաւորք կը կարծեն թէ մեք նեղուն ենք, զի ծուռը դրած ենք։ յատին կանգնիմք։» է՛լսէր մին այն անմոռոռ Գաղիացիներէն, որք անցեալ դարուն վերջերն յեղափոխեցին Գաղղիան և աշխարհս համայն։

* * *

Մինչև այդ երանաւէտ օրն, մինչև Հայոց կատարեալ միացման օրն, խնդութեամբ և խնդակցութեամբ կ'ընդունինք այն մատեաններն, որք մեղ կը հասանին վենետիկի և վիեննայի սրբակրօն մատենագիրներէն։

Երբ ծագումնք բնութեան ծայրն մէջ կը սկսին դեղնիլ ու թառամիլ արդէն, Մխիթարեան Հարք՝ իրր ծածկելու համար աշնան տխուր աւերն՝ վերջին անգամ յղած են մեղ դրական երփներփութեան ծաղկներ, օտարազգի մատենագրութեանց դրախտներէն քաղուած, և այնքան թարմաւէտ յաճախ, այնքան հոտաւէտ, մինչ զի կարծէիր թէ տակաւին իրենց բուներն վրայ կը փայլին ու կը բուրեն այն ծաղկունք։ Ընաբէ՛, որ տեսակէն կ'ուզես, ա՛ր ծաղկին սիրահար ես։ Այս ծաղիկն իտալական երկնին, իտալական արփւոյն տակ փթթած է։ միւսն Ամերիկան անտառաց խորհրդաւոր ստուերաց տակ ծլած է։ Ասի հեծեծանք մ'է, ասի աղօթք մ'է։ Մին առ լոյսն ուղղուած է, միւսն առ Ս. Կոյսն։ մին առ լուսին, միւսն առ Թիթեռնիկն։ —Սորա խորագիրն է «Հրդեհ»։ դորա խորագիրն է «Գիւղն ամայի»։ նորա խորագիրն է «Զանգակ»։

Մի՞թէ՞ • • • հրդեհն չը վառիր մեր հայրենեաց մէջ։ —Մի՞թէ՞ Հայոց գիւղօրայք չեն ամայանար մի առ մի։ —Մի՞թէ՞ սկսած չէ հնչել տագնապի զանգակն • • •։

Բայէ՛ք Ծաղկաքաղ հարուածքն 92 էջն, և ըսէք — չէ՞ք յիշեր թէ հեռագոյ ոսանաւորին նման ձայներ մերթ կը հասնին ձեր ականջն Հայաստանի խորերէն։

Մինչև ցե՞րբ տեսցուք, ո՛վ Տէր,
մինչև ցե՞րբ։
Զամբարիշտս ամբարձեալ քեզ
ընդդիմակ։
Տե՛ս զի դան մինչ ի Տաճար քո
խրոխտալ։
Խօսս ունին զերիզբոպադուսդ՝ ընդ
քս դրսոն։
Մինչև ցե՞րբ տեսցուք, ո՛վ Տէր,
մինչև ցե՞րբ։
Զամբարիշտս ամբարձեալ քե՛զ
ընդդիմակ։

ԴՐԱՍԼԷՐ ԱՏՈՄ (1)

ՊԱՐՈՆԵԱՆԻ ՊՏՈՑՏԻՆ ՎՐԱՑ ՊՏՈՑՏ ՄԸ

• • • Խմբագիր Մասիս լրագրոյ։

Խնդրեմ բարեհաճիք Ձեր պատուական թերթին մէջ տեղ մը շնորհել հետեւեալ տողերուն։

Երբ Պարոնեան իւր հռչակաւոր Պատմութիւնը գրել սկսաւ, ամէն ոք սիրով ընդունեց զայն՝ յաւելով որ ամէն թարմ ազգային վիճակին ճիշդ պատկերները պիտի տեսնուէին անոնց մէջ։

Ինչպէս բնալը կղզւոյն ժողովուրդը, կարծեմ շատերն իրենց ակնկալութեան մէջ սխալած ըլլալնին փարձով տեսան։

Երբ շահը կամ ակնառութիւնը գրչի մը առջև պատնէշ կը կանգնի, այն գրչէն ճշմարտութիւն ըսպասելը՝ մեռեալն մ'աչքէն արտասուք սպասելու կը նմանի։

Ճշմարտութիւն մը որչափ ակներև ըլլայ, կը գտնուին մարդիկ՝ որք սպիտակին սև ըսեն, և սևին սպիտակ։

Այս եղած է և է աշխարհիս ընթացքը, ինչպէս նաև Պարոնեանի։

Բնալի նկատմամբ Պարոնեանի ընթացքը չէինք մեղադրեր, եթէ չտեսնէինք իւր վրայ իճատիէի նկատմամբ այդ ընթացից հակառակները։

Պարզենք մեր ըսելիքը։

Պարոնեան այս ամսոյ Բնալը անցուց։ թէ՛ բերանացի և թէ գրաւոր կերպով իրեն հաղորդուած տեղեկութիւնները, մասնաւորապէս պիտի խնամի իր կարդին։

Ուրախանալ թիւնն եղած հոգերուն արեւելքէն արեւմուտք կամ հիւսիսէն հարաւ շարժելու խնդիրներէն միայն չեին բաղկանար, խնդիրներ որ ազգային չեին բաղկանար, այլ թէ այն հոգերը Բէջոյ ապասիի մէջ շնորհիւր կը լայնցին կամ կ'երկնցային ալ։

Ինչը գիտէր՝

Թէ այս տեղ թատրոնի մը կար անուամբ, բայց իրօք միապետութիւն մը կը տիրէր։

Թէ Մեծ պահոց մէջ ժողովրդը խռովութիւն մը հանած էր Աստապ էֆէնտիին կղզւոյն ազգային դատերէն հեռացնելու համար։

Թէ Աստապ էֆէնտի ժողովրդեան հետ իրաւախոհ ըլլալով կրցած է դարձեալ իւր պաշտօնը շարունակել։

Թէ տանկով բաղաքացիները բանտարկութենէ և բաղաքուդն ալ ըսպառնալիքէ ազատ մնացած էին։

Թէ Ներսիսեան անունով ընկերութիւն մը կար ։ որ ոչ բաժանորդ ունէր և ոչ անդամ, և որ տարեկան 150 ոսկիի չափ անշարժ կալուածով եկամուտի մը տէր էր։

Թէ այս կալուածները գլխաւորաբար մէկ անհատի մը նուէր էին՝ հասոյթը դպրոցի յատկանալու նպատակաւ նուիրուած։

Թէ այս կալուածներուն փոխարէն 10–12 տարիներէ ի վեր հաղիւ այս տարի ազգային դպրոց մը կամ լաւ ևս ծաղկոց մ'ունեցեր է կըզին։

Թէ այս կալուածներն ա՛յն ասպիճան յառի մատակարարութեան մը ղահ եղած են, որ կղզւոյն մէկ ատակի ալ օգուտ չեն ունեցեր։

Թէ ոսկի դրամ ուսանդի փոխարէն 130 ղրուշի 100նոց թուղթ առնուած էր։

Թէ ամուրդի տրուած ընկերութեան մէկ կալուածը մինչդեռ 14 ոսկիի բռնելու ատորագրող կար, երբորդի մը միջոցաւ 14 1/2 ոսկիի բարձրացնելով, վերջը 4 ոսկիի եէմենիճեան Յակոբ էֆէնտիի վարձուած էր։

Թէ եկեղեցին նախորդ Ցնտեսական խորհրդէն ճանչցուած 104000 ղրուշ պարաք մը ունէր Սմիւռնաճեան Բարթիկ էֆէնտիի, բայց կալուածոց հասոյթը առանց դպրոցի ծառայելու, եկեղեցւոյ պարտուց վճարմանն ալ չէր կրնար ծառայել, վասն զի Պարիսիարքարանը՝ հակառակ նախորդ Ցնտեսական խորհրդոյ տեղեկագրին՝ անդամ ընկերութեան մը սեփականութիւն ճանչցած էր այդ կալուածները, եւ, եւ։

Մենք այս տեղեկութիւններուն յայտնուիլը ուղղակիօրէն որ և է անձնական օգուտ կամ թշնամութիւն չունենք, ընդհակառակն եթէ մէկ կողմանէ հոգերու շարժմունքն իրեն արհեստ ընող Բէջոյ ազասին մեղ ղղուանք կը պատճառէ և կարհամարհանք, միւս կողմանէ Աստապ էֆէնտիի պատկառելի ծերութիւնը գուցէ ամենէն աւելի յարգողներէն մին ենք, կը ճանչնամք նաև կալուածները նուիրատուին ձեռքէն ազատելու համար վարած դատին մէջ նորա ծառայութիւնները և բնաւ չեինք ուզեր և չենք ուզեր դարձեալ կոսկածի ենթարկել նորա բարոյականութիւնը։

Բայց ս և է պատճառաւ յառի մատակարարութեան մը վրայ լսելն ալ ազգային շահուց ելնաստակար կը տեսնէինք, և ահա այս նշանակեստով կը փափաքէինք որ Պարոնեանի 'ի Բէնալը բրած՝ ոչ պատյաբ՝ այ երկամեայ ընթացքը, ուրիշ թղերու մէջ տեղի ունեցած առ ժամանակեայ պատյաններէն աւելի ստուգութիւններ յայտնէին։

Ի՞նչ տեսանք։

Մինչդեռ Իճատիէի մէջ Ներսիսեանի մը շնորհիւ և ջանիւք վարժարան մը կառուցուած ըլլալու ճշմարտութիւնը կ'ուրանայ կամ կասկածի կ'ենթարկէ, Բէնալի մէջ ատան տարիէ ի վեր 150 ոսկիի չափ դրամագլուխ յատկացեալ տարեկան եկամուտ առանց նպատակին ծառայելու ապարդիւն կը մնային, և այս կէտը Պարոնեան գ իտանալով լռութեան քողի ներքև կը ծածկէ։

Պատճա՞ռ։

Աստ բացատրութեանը յատուկ

եղած բառը չենք ուզեր Պարոնեանի ալ յատկացնել։ բայց կը ցաւինք յայտներու թէ այս պարագան Գաղղիոյ մէջ դարձած «չանթաժ» բառին նշանակութիւնը բառական լաւ կը բացատրուի։

Ընդունեցէք եւ։

1 Հոկտ. 1880 Դ. Ե.

Բնալը կղզի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ Ի ՍՈՒՐԻՈՅ

Բերիա (Հալէպ) 25 օգոստ. 1880

• • • Տէր։

Առաջնորդ կ'ուզեմք, առաջնորդ կ'ուզեմք • • •

Այս է ահա բոլոր Կիլիկիոյ և մանաւորապէս Բերիոյ ազգայնոց մեծագոյն մասին՝ ժողովրդեան աղաղակը կամ սրտին զգացման թարգմանութիւնը։

Մինչդեռ Կիլիկիոյ Վեհաշնորհ Կաթողիկոսը և Կոստանդնուպոլսոյ Սրբազան Պատրիարքը իրենց մէջ կը վիճաբանին վոխադարձ իրաւասութեանց վրայ, Կիլիկիոյ խեղճ ժողովուրդը կը հեծէ և կը տաղտրի, ինքզինքը անգլուխ, լքեալ, և որ աւելի ցաւալին է, իւր ազէտ, անխիղճ, անկրօն քահանայից ապօրինի ընթացքը տեսնելով։

Ցիրաւի, մէկդի թողով, տէրութեան քով, ազգային ներկայացման անհրաժեշտ պէտքը, միմիայն այս քահանայից ձեռքէն ազատելու կամ դանդաղցնելու համար, գոնէ միմիայն այս բարեգործութեան համար, առաջնորդ մը պէտք է ի Բերիա։ բայց սա տակաւ մէկը ըլլալու չէ, այլ ընդհակառակն բռնապետ մը միայն կարող է այս փարիսեցիները զսպել։

Քահանայք ամէն ջանք ի գործ կը դնեն առաջնորդարանն անբնակ պահելու համար, վասն զի կ'ըզդան թէ առաջնորդով մը չը պիտի կարողանան ուզածնին ընել։

Մինչև հիմա Ձեր կամ Ա. Մամուլի թղթակցաց հաւատալով Բերիոյ Հայ ժողովուրդը երկու ազգակործան կուսակցութեանց դերի կամ զոհ կը կարծէք անշուշտ։ ո՛չ, այս կուսակցութիւնները ղրդռողը քահանայներն են, որովհետև երկպառակութենէ չահ մը կը քաղեն կամ կը յուսան։ Այնչափ միութիւն կը տիրեն որ իրենց մէջ անդամ համաձայն չեն։ Աւազերիցութիւնը երեք քահանայի բաժնուած է, յաջորդաբար ամիս մը պաշտօն վարելու պայմանաւ. թէ՝ պէտ և քուէարկութեամբ իրենցմէ մին աւագ ընտրուած է, բայց միւս մը ծերար մը կերպասով քուէարկութիւնը ոչընչացուցած է։

Եթէ քահանայից անկարգութիւնները թուեմ, Մասիսիդ լոյսերը բաւական չեն։

Բայց հոս ներկեցէք մի խորհրդածութիւն։ Մեք աշխարհականքս մեր կղերին չենք հաւնիր, ազէտ, չահամոլ են կըսեմք։ բայց յանցանքը որո՞ւ է, ո՞վ է մեղապարը։ մենք։ ինչո՞ւ ազէտ և չահամոլ անձեր քահանայութեան արժանի կը դասեմք։ Ով որ մեր մէջ որնանկացած և խեղճ է, կարդալ գիտնայ կամ չգիտնայ, զայն քահանայ կընտրեմք, որպէս «խեղճը քանի մը փարա վատակի»։ այսինքն եկեղեցին իրեն խանութի կընեմք և յետոյ կը պարմանեմք թէ մեղմէ ոտակ կը քաշէ։ Հարկաւ մեղմէ պիտի քաշէ, մեղմէ՝ որ խանութին յանախորդներն ենք։

Երբէք իրաւունք չունիմք դանդատելու։ բայց ներկայն թո՛ղ մեղ դատ մ'ըլլայ և օգուտ մը քաղեմք։ Ազգին անհրաժեշտ պէտք է կղերական ղեկավարոց մը, ուր պարտաւորին քահանայացուք և եկեղեցականք։

Ըսի թէ մի միայն քահանայից համար առաջնորդի պէտք կայ։ ասով չը կարծիք թէ աշխարհականք ազգասիրական ոգւով վառեալ ամէն գործ ինքնին կարող են տեսնել առանց առաջնորդի։ Բերիոյ Ժողովուրդը պանդուխտ ժողովուրդ մ'է, Տիգրանակերտցի, Սասնցի, Անկոյր եւ։ բնիկ Բերիացի խիստ քիչ կայ։

Որովհետև Բերիա ոչ մէկուն հայրենիքն է։ բնականաբար ազգասիրութիւն խիստ քիչ կայ։ Այն մասը զոր բնիկ կը կոչեմք, այն ալ բոլորովին Արաբացի է, (եթէ եկեղեցին չըլլար, այսօր մէկ բնիկ Հայ մը չգտնի տեսնուիր։) այս բնիկ մասը՝ նա մանաւանդ ազգասիրութիւնն ինչ է չգիտեր, ազգին համար աշխատիլ իրեն համար ժամանակ կորսընցնել է։ Արդէն Հայերէն բառ մ'անգամ չգիտեր։ անուններ իսկն Արաբացի են, ինչպէս Բազալահ (Աստուածատուր), Եօրդանի (Գէորգ), Գարբուր (Գրիգոր), Սալիա (Համբարձում), Նէհիպ, Սէլիմ եւ։

Անցեալները խեղճ Կիրակոս էֆէնտի Ղազանճեան ուզեց դպրոցի սըղայոց միայն անունը հայացնել։ • • • ինչ փորձանք։ նոխ՝ հայրը ազան դպրոցն հանեց և սարտանցաւ Պապական ըլլալ։ յետոյ միջամտելով և ազան անունը չփոխելու պայմանաւ, հայրն հազ ազան դպրոց վերադարձաւ։ Հոս Հայերէն խօսողները պանդուխտներն են, անկարելի է բնիկ Հայը Արաբէն զատել, թէ՛ հագուստով և թէ լեզուաւ։ անենին տարբերութիւն չկայ։

Վերջապէս ի մի բան, Բերիոյ թէ՛ պանդուխտ և թէ բնիկ Հայը ազգութեան ոգի մը, կայծ մ'անգամ չունի։ Հաղիւ հազ Սահմանադրութիւնը մատդոած է, և դեռ ապէկ կը գործադրուի։ Կառաւարեալ գործադրութեան համար առաջնորդ մը պէտք է, բայց ազգասէր, գիտուն, խոհեմ և ի հարիւրն խիստ մէկը պէտք է որ իւրաքանչիւրին սրբեցնէ իւր պարտքն ու իրաւունքը և ազգասիրութիւնը։

Երիտասարդութիւնը կը քնանայ, չ, կը քնանար։ Կարծես թէ ժամանակէ մ'ի վեր մեծ մասն արթնցաւ իւր խոր քունէն, աչքերը բացաւ և տեսաւ • • • միութեան պէտքը, զոյց իւր անխոհեմ անտարբերութեան հետևանքը, և չուտ մ'սկսաւ գործել։

Բերիոյ երիտասարդք ընկերութիւն մը կազմեցին Ուսումնասիրաց անուամբ, նպատակ ունենալով Բերիոյ ազգայնոց մէջ ուսումն տարածել տաճնախօսութեամբք և ձրի դասախօսութեամբք։ Կարծեմ, ամիսի մ'իւր լսարանը կը բանայ և դասախօսութիւնները կ'սկսի։

Այս ընկերութեան անդամակցած է Բերիոյ երիտասարդութեան կէսը։ բայց երեսալով անդամց թիւը կը չատնայ, եթէ ընկերութիւնը գործ և աշխատ ցուցնէ։ Ցաջողութիւն կը մաղթեմ Ուսումնասիրաց ընկերութեան, որոյ վերայ մեծ յոյս ունիմ։ նա մանաւանդ երբ լսեցի թէ Պոլսոյ Կիլիկեան ընկերութեան մի գործոն ձիւղն է եղեր։ Հիմա որ ընկերութիւնք միացան։ Ուսումն սիրաց ընկերութիւնը հնօր պաշտպան մ'ունեցաւ, որով իրեն գեղեցիկ ապագայ մը կը նշմարեմ՝ եթէ իւր գործը լաւ կատարէ։ Նա կարող է նպաստակին հասնիլ և տա ազգն ունեցած պարտականութիւնը կատարել, զի իւր մէջ բաւական ուսումնասէր, ուսումնական և խելացի տարրեր ունի։

Օ՛ն ուրեմն, ազնիւ երիտասարդք։ գործեցէ՛ք, ապագայն գձեղ լաւ պիտի վարձատրէ։ ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը կրանքի չափ սուրբ են և Աստուծոյ հաճելի։ Եւ մի մոռնաք,

Որ ունիցի տայցն նմա, և որ ոչ ունիցէ, բարձցի ի նմանէ։

Գանք առաջնորդական խնդրոյն։ համառօտանք։ Բերիա առաջնորդ մը պէտք է թէ՛ ազգային գործոց շարունակութեան, ուղղութեան և կարգաւորութեան համար, թէ՛ քահանայից և ժողովրդեան պարտք և իրաւունք ճանչցնելով՝ գանոնք ուղիղ ճանապարհը դարձնելու համար։

Այո՛, ժողովուրդն ամբողջ միաբերան առաջնորդ մը կուզէ, բայց դժբաղդաբար մէկ մասը Գեր. Մոսէս վարդապետը կուզեմ կըսէ, միւս մասն ալ ուրիշ ո և է վարդապետ մը կուզէ, և ահա անհամաձայնութիւնը ծագած է։ Հարցնենք մէկին։

—Բարեկամ, Մոսէս վարդապետը ի՞նչ առաւելութիւն ունի, լաւ քարոզ կուտա՞յ։

—Ո՛չ, քարոզը հաճելի չէ։

—Ուրեմն ի՞նչ • • •

—Գեղեցիկ ոտամբ կը բռնէ, գեղեցիկ դեր մ'ունի, ուզած տեսակ դերդ կը դրէ • ամէնքս ալ անկէ կը վախնանք։

—Ուրեմն դուք առաջնորդ չեք ուզեր, այլ ոտամբակալ և գծագրիչ մը։

—Թող նա գայ • տե՛ս ինչեր կը գործէ։ հա բան մը չկրցաւիր, ամէն բան կ'արձանագրուի, ասելդ մը չկրցաւիր • • • Միւս հակառակ մասին բան մը չհարցնենք Մոսէս վարդապետի վրայ, անցեալ տարուան Մասիսի էջերը բաւական են։

* Տարակոյս չկայ, և ասոր ակնարև ապացոյց կրնան համարուիլ նաև այդ չոչորդ բաղդախնդրին մրոտած «Ազգային ջոջեր» անուանով բանդագուշական կենսագրութիւններն, որոց նիւթ եղած անձանց սանք անխնայ ձաղուած են, սանք ալ ներբողուած և մինչև իսկ չաղաբորթուած։ Զարմանալի է սակայն, որ այլոց անձնական պատիւն այսպէս իրեն շահու նիւթ ընող վատ չուառական մը՝ կը յանդգնի զրական հրապարակին վրայ յոխորտալ իրր պատուոյ զգացում ունեցող անկողմնակալ և անշահասէր մարդ մը։ Ծ. Խ

Մոսէս Վարդապետ

Գեր. Մոսէս վարդապետ Գրիգորեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ս. Աթոռոյ Ներսիսեան Դպրանոցի տեսուչն է։ Ինչպէս ամենայն դպրանոցի տեսուչ, նոյնպէս Գեր. Մոսէս վարդապետ ալ դասատու է։ Դասատուութեան մասին ինչ ասենք։ Ինչպէս ամենայն դասատու

Les annonces pour la France, l'Angleterre l'Allemagne, l'Autriche-Hongrie, la Belgique, la Suisse et l'Amérique sont exclusivement reçues par la *Compagnie Générale de Publicité Étrangère* *G. L. DAUBE et Cie*, à Paris, Londres, Berlin, Vienne, Francfort, Zurich, etc.

Կ'եզրակացնեմ, վեհ. կաթողիկոսն և Սրբազան Պատրիարքը, վաղ ընդ վայթ, այս Կիլիկիոյ վիճակին առաջնորդական իրաւասութեանց խնդիրը վերջնականապէս լուծելու են և խեղճ ժողովուրդը անհովիւ, քահանայից չհամոյնանալու ճարակ և կուսակցութեան դոյն ձգելու չեն։

Առաջնորդ, առաջնորդ . . . . բայց ապրանք, անձնուէր Առաջնորդ մը։

Ահա Բերիոյ ազգային բարոյական վիճակը. կը մնայ դպրոցն. բայց հարկաւ Կիլիկիոյ վարժարանաց ընդհանուր Տեսուչը, որ հոս եկած է դպրոցները բարեկարգելու, Ձեզ մանրամասն տեղեկութիւններ արդէն տուած է կամ պիտի տայ։ Մինչև հիմա խիստ քիչ բան կրցաւ ընել. լսեցի թէ սակայն չկայ եւ ազգային տնտեսութիւն։ Միայն նոյեմբերին 21,000 ղրուշ պիտի տրուի դպրոցին համար. Կիլիկեան կամ մեացեալ բնակութեան, մինչև այն ատեն սակայն չկայ . . . ։ Կը յուսամք որ նոյեմբերին դպրոցները կ'սկսին կարգի մտնել չնորհիւ մեացեալ ընկերութեան և տեղւոյն Ազգային Նիւթական օժանդակութեան։

Բերիոյ անցեալը՝ ամենայի, ներկայն՝ ցաւալի. բայց ապագայն նախանձելի պիտի ըլլայ. յոյսերնիս մեծ է։

ԱՐՄԷՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Շ. ԲՕԼ. ՏԷ. ԳՕԳ

ԿԻՆ, ԽԱՂ, ԳԻՆԻ

Թարգմանեալ 'ի Գաղղիերէնէ

Հրատարակիչ Կ. Ա. Պարսնեան

կը ծախսուի ամեն Հայ դրավաճառաց քով։ Գին 10 ղրշ։

Նորայրի Դաղղիերէն–Հայերէն ընդարձակ բառարանին քսաներորդ թերթն հրատարակեցաւ։

Թերթերը կանոնաւոր կերպիւ կը հրատարակին ամեն շաբաթ օր։ Վաճառման գլխաւոր տեղին է Ֆըրէնկեան դրավաճառանոցը, Ուղուն չարշը։ Ի դիւրութիւն հասարակութեան թերթերը կը վաճառին նաև Դավաֆեան և Ղուկասեան դրավաճառաց քով, ինչպէս նաև Ակշակ էֆէնտիի թղթավաճառանոցը 'ի Ղալաթիա և Վայսի դրավաճառանոցը 'ի Մեծ փողոցն Բերայի։

Գին իւրաքանչիւր թերթին 60 փարա արծաթի։

ՄԵԱԿՈՒԹԻՒՆ ԴԵՏՆԱԽՆՁՈՐՈՑ

Գրէաց Ս. Ե.

Տպագրութիւն Արամեան

Այն ամեն երկիրներու մէջ, ուր գետնախնձորոյ մշակութիւնը ընդունուած է, սովը խպառ դադրած է։ Ժամանակ է արդ որ գտնէ վերջին դաւն փորձէն յետոյ ներմուծեմք մեր մէջ այս պատուական ընդեղէնի մշակութիւնը։

Այն տեսակը որ մեծ խնամքով, մաքուր ապագրութեամբ և պատկերազարդ 'ի լոյս ընծայուած է, կը խօսի, պարզ և յստակ լեզուաւ, գետնախնձորոյ ամեն տեսակաց մշակութեան վերայ։

Ամեն կարգի ընթերցողաց դիւրամատչելի է գնոյն ժամանութեամբ, որ է 2 1/2 գահեկան արծաթ։

Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ ընկերութեանց դրատունակը։ — Կը գտնուի նաև բոլոր Հայ դրավաճառաց քով։

Իւրաքանչիւր օրինակ Հայոց Միացեալ Ընկերութեանց կնիքը պէտք է կրէ։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒԻՄՈՒՄԻՆ

Երկկ իրիկուն գոյութեան		10.30
Այս առաւօտ բացուեցաւ		10.33
Կէս օրին		10.33

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՊՈՅ

2 Հոկտեմբեր

Սօսիկիկ Ժէնէրալ	Անգղ. լիր.	4.5
» Փոխանակութեան	»	2,58
Կ. Պոլսոյ Պանքային	»	7,18
Բրէմի Ժէնէրալ	»	3,22
Փոխ. 1865	Ֆր.	50,
» 1865	»	50,
» 1869	»	49,50
» 1872	»	17,
» 1873	»	48,50
Բաւէլիի երկաթուղի	»	29,
Լաւրիուտ	»	103,50
Թրամուայ	Օսմ. լիր	400
Թղթադրամ	»	1200

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՅ

2 Հոկտեմբեր

Անգղ. լիրա	ղրշ.	110
Նարալէոն ոսկի	»	87 20
Խրէսիալ Ռաւս	»	89 20
Ռուսական թղթադրամ. 9 ռուպ.		14 քարիք
Գերմանիոյ	ղրշ.	51 20
Մէհրիպէի տարրերութիւն	»	7 2
Հինդնոց	»	213 20
Վենոց	»	128 5
Մէմալիք	»	214 10
Պլենտ	»	570
6 փարանոց	»	220



ՇԻՐԲԷԹԻ ԽԱՅՐՈՒԷԻ

ՇԱԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1880 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ 15

ԲՈՍՓՈՐԷՆ ԻԶՆՈՂ, ՇԱԳԵՆԱՒՆԵՐԸ

Յ-ոյ Եւրոպական Ժամ Թիւ

Յ-ոյ	Եւրոպական Ժամ		Թիւ
1		Եկնիմահալկէն Մէկզարպուրնու. Պէյիւքտէրէ Թարապիա Եկնիքէյ Սմիրնա. Պոյաճըքէյ. Բուսկի Հիսար. Պէշիք. (Արնաւուտ գիւղի շուրեհնուին հետ պիտի հաղորդակցի.)	34
1 30	Ր և Ա. Գալատէն	Եկնիմահ. Մէկզարպուրնու. Պէյիւքտէրէ. Քիրէքեղ. Թարապիա. Եկնիքէյ. Էմիրկէն Պոյաճ. Ր. Հիսար. Պէշիք.	32
2 30	Եկնիմահալկէն	Մէկզարպ. Պէյիւքտէրէ. Թարապիա, Եկնիքէյ. Էմիրկէն. Ր Հիսար. Պէշիք։	33
3 30	Եկնիմահալկէն	Մէկզարպուր. Պէյիւքտէրէ. Թարապիա. Եկնիքէյ, Սմիրնա, Էմիրկէն, Պոյաճըքէյ, Ր. Հիսար, Պէշիք։	18
4 15	Ա. Գալաթ,	Եկնիմահալկ Մէկզարպ. Պէյիւքտէրէ. Թարապիա. Եկնիք. Սմիրնա. Էմիրկէն, Պոյաճըքէյ, Ր. Հիսար, Պէշիք, Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրմանաքէյ. Պէշիկթաշ. Սիրքէճի (Ուրբաթ օրերը Սիրքէճի չպիտի հանդիպի).	19
5 15	Եկնիմահալկէն	Մէկզարպուրնու. Պէյիւքտէրէ. Թարապիա. Եկնիքէյ Էմիրկէն. Ր Հիսար, Պէշիք, Արնավուտքէյ, Գուրուչէշմէ. Օրմանաքէյ. Պէշիկթաշ։	34
6 30	Եկնիմահալկէ.	Պէյիւք. Թարապ. Պէյքօզ Եկնիք. Միրկիւն. Գանլճա. Ր. Ա. Հիսար. Գանտիլի Արնավուտքէյ; Զէնկէլքէյ. Պէյլրպէյի. Օրմանաքէյ Գուզկունճուք. Պէշիկթաշ. Իսկիուտար։	4
8	Ա. և Ր. Գալատ	Եկնիմահալկ. Մէկզարպուրնու. Պէյիւքտէրէ Թարապիա. Պէյդօզ. Եկնիքէյ. Էմիրկէն. Պոյաճըքէյ. Ր. Հիսար, Պէշիք, Անավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրմանաքէյ. Պէշիկթաշ. (Ուրբաթ օրերը Սմիրնա)	32
10		Մէկզարպուրնուէն Պէյիւքտէրէ. Թարապիա. Եկնիքէյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավուտքէյ. Օրմանաքէյ, Պէշիկթաշ	22

Արնաւուտքէն

1		Արնավուտքէյ. Գուրուչէշմէ. Օրմանաքէյ. Պէշիկթաշ։	19
1 30	Արնավուտքէյ,	Գուրուչէշմէ. Օրմանաքէյ. Պէշիկթաշ. Գալատա։	2
2	Պէշիք, Արնավուտքէյ.	Գուրուչ. Օրմանաք. Պէշիկթաշ. Գալատա։	22
2 45	Արնավուտքէյ.	Գուրուչ. Օրմանաքէյ. Պէշիկթաշ (Բացի ուրբաթէ)։	25
3 30	Պէշիք. Արնավուտքէյ,	Գուրուչ. Օրմանաք, Գուզկ. Պէշիք. Գալատա։	2
4 15	Արնավուտք.	Գուրուչ. Օրմանաք. Պէշիքթաշ, Գալատա։	22
5	Արնավուտքէյ.	Գուրուչէշմէ, Օրմանաքէյ. Պէշիկթաշ։	2
10 45	Արնավուտքէյէն	ուղղակի կամուրջ։	19

Ա-ՒՈՒԿԱՆ ԵՂԷՐ

1		Պէյքօզ, Բաշատպահշէ. Բիֆթիք Փաշա մահալկսի. Գանլճա, Ա. Հիսար. Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ, Պէյլրպէյի. Գուզկունճուք։	21
1		Արնավուտքէյ. Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլրպէյ. Գուզկունճուք. Գալատա։	4
1 15	Պէյիւքտէրէ.	Թարապ. Պէյքօզ, Բաշատպահճէ. Գանլճա. Ա. Հիսար, Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլրպէյ. Գուզկունճուք, Գալատա։ (Ուրբաթ օրերը Ժամ 1 1/2ին)։	17
3	Պէյիւքտէրէ.	Թարապիա. Պէյքօզ, Բաշատպահճէ. Ր. Բ. մահալկսի Գանլճա. Ա. Հիսար, Գանտիլի, Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլրպէյ. Գուզկունճուք. Պէշիքթաշ. (Բացի ուրբաթէ)։	20
4 30	Պէյքօզ,	Բաշատպահճէ. Ր. Բ. մահալկսի Գանլճա. Ա. Հիսար, Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ. Պէյլրպէյ. Գուզկունճուք. Պէշիքթաշ։ (Ուրբաթ օրերը Սիրքէճի չպիտի հանդիպի)։	21
8 45	Պէյիւքտէրէ Պէյքօզ	Բաշատպահճէ. Գանլճա. Ա. Հիսար Գանտիլի. Վանիքէյ. Զէնկէլքէյ, Պէյլրպէյ. Գուզկունճ. Իսկիուտար, (Ուրբաթ օրերը Բիֆթիք փաշա մահալկսի)։	25

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ, ՇԱԳԵՆԱՒՆԵՐԸ

Յ-ոյ Եւրոպական Ժամ Թիւ

2 15	Գալատա։	Իսկիուտար Պէշիկթաշ։ Գուզկունճուք. Օրմանաք Պէյլրզէնկ. Արնավ. Գալատա. Ա. և Ր. Հիսար, Գանլը Էմիրկէն, Եկնիք. Պէյքօզ Թարապ. Պէյիւք. Եկնիմահ։	4
2 15	Պէշիք. Օրմանաք.	Արնավ. Պէպէք, Ր. Հիսար. Էմիրկ. Եկնիք, Թարապ. Պէյիւքտ. Մէկզարպ, Ր և Ա Գալատա։	19
3 15	Պէշիկ. Օրմանաք.	Արնավ. Պէպէք. Ր. Հիսար, Գանլճ, Միրկիւն, Սմիրնա Եկնիք. Թար. Պէյիւքտ. Մէկզար. Եկնիմ.	34
5	Գալատա։	Պէշիկ. Օրմանաք. Գուրուչէշմէ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար, Պոյաճ. Էմիրկէն. Եկնիք. Պէյքօզ, Թար. Պէյիք. Մէկզարպուրնու. Եկնիմահալկ. Գալատա։	32
6 30	Իսկ. Պէշիկթաշ.	Գուզկունճուք. Օրմանաքէյ. Պէյլրպէյի. Զէնկէլքէյ Արնավուտքէյ Գանտ. Ր. Հիսար. Գանլճա. Էմիրկէն. Եկնիք, Թարապիա. Պէյիք.	25
8 15	Պէշիկ. Օրմանաք.	Արնավուտք. Պէպէք. Ր. Հիսար Էմիրկէն Եկնիք. Թարապիա. Պէյիքքէյրէ Մէկզարպուրնու։	22
9 15	Պէշիքթաշ.	Օրմանաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք. Ր. Հիսար Պոյաճըք. Էմիրկ. Սմիրնա. Եկնիք, Թարապ. Պէյիք. Մէկզար. Եկնիմահալկ։ (Բացի ուրբաթէ)։	20
10	Պէպէք,	Ր Հիսար, Պոյաճըքէյ. Եկնիք. Թար. Պէյիք. Մէկզարպ. Եկնիմահալկ։	33
10 30	Պէշիկ.	Օրմանաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկէն. Սմիրնա. Եկնիք. Թարապ. Գրիրճմ. Պէյիքտ. Մէկզարպ. Եկնիմ։	18
11 10	Պէպէք	Ր. Հիսար, Պոյաճ. Սմիրնա. Եկնիք. Թարապ. Պէյիքտ. Մէկզարպ. Եկնիմ։ (Հարաւային հոսվերուն Սմիրնա չհանդիպիր)։	32

Արնաւուտ ԵՂԷՐ

2 45	Պէշիքթաշ,	Օրմանաքէյ. Արնավուտք։	2
3 30	Պէշիկթաշ.	Օրմանաքէյ. Արնավ.	22
4 30	Ուղղակի Արնավ.		2
10	Պէշիկթաշ,	Օրմանաք. Գուրուչ. Արնավ.	19
11	Գալատա,	Պէշիկ, Օրմանաք, Գուրուչ. Արնավուտ.	4
11 20	Պէշիկթաշ,	Օրմանաք. Գուրուչ. Արնավուտ. (Բացի Ուրբաթէ)։	25
11 40	Պէշիքթ.	Օրմանաք. Գուրուչ. Արնավ. Պէպէք։	22
12	Պէշիք.	Օրմանաք. Գուրուչ. Արնավ։	2

Ա-ՒՈՒԿԱՆ ԵՂԷՐ

3		Իսկիուտար Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բիֆթիք բաշա մահալկսի Բաշատ. Պէյքօզ։	21
9 45	Գալատա. Գուզկ,	Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտիլի, Ա. Հիս, Գանլ. Բաշ. Պէյքօզ, Մէկզարպ. Ր. Ա. Գալատ։	17
10 30	Գուզկ. Պէյլ.	Զէնկ. Վանիք. Գանտիլ. Ա. Հիսար, Գանլճ. Զուպ, Բաշատ. Պէյքօզ, Թարապ. Պէյիք։	34
11	Պէշիք.	Գուզկ. Պէյլրպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշատ. Պէյքօզ։	21
11 10	Գալատա.	Գուզկ Պէյլ. Զէնկ. Վանիք. Արնավուտք։	19

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Գանթի եղբարք և Շահինի ընկերք պատ'ւ ունին ծանուցանել Յարգ. հասարակութեան որ իրենց պատրաստած ընտիր ծխախոտներովը յաճախորդներն առաւել եւս գոհացնելու նպատակաւ 'ի վաղուց անտի ծխախոտի արուեստի մէջ հանրածանօթ Տէմիրդաշուլեան եղբարց հետ ընկերացած են, որով յաճախորդք ոչ թէ միայն եէնիճէի առաջին կարգի ծխախոտաց և սիկարներու ընտրութեամբը, այլ իրենց յանձնարարութեանց փութանակի կատարմամբը ևս գոհ պիտի ըլլան։

Տաճկաստանի և Եւրոպայի բոլոր կողմերէն ուղղեալ ամեն տեսակ և ուղղուած քանակութեամբ թէ՛ տերեւ և թէ՛ չարդած վաճառատոյցանձնարարութիւնք կ'ընդունուին և անմիջապէս կը դրկուին։

Ծանօթութիւն. Փաքէթներն իրենց նախկին անունը պիտի կրեն, բայց հինէն տարբերելու համար վրան տպագրեալ «Տէմիրդաշուլեան եղբարք» պիտի նշանակուի։

Եւրոպայի կողմերէն յանձնարարողք կառավարութեան չնորհիւ Պոնդրոյի տուրքէ ազատ են որոյ համար 100ին 20 զեղչ կըլլայ։

Վաճառատուներն են.

Ղալաթիա Սանտրքճըլար Թիւ	130
Զէյնան–Գափու Զէօմլէքճի. »	29
Լէր.	
Լիմն էօնիւ »	56

և բոլոր օտար վաճառատեղիք։

Ընկերութեանս ուղղակի նամակաց հասցէն պէտք է լինի (Տէմիրդաշուլեան եղբարք, Ղալաթիա Սանտրքճըլար Թիւ 130)։

Յ. Գ. Որչափ որ ասոյն ընկերութիւնը հաստատած եմք այսու ամենայնիւ մեք մեր նախկին ծխախոտի գործարանը կը շարունակեմք առանձնաբար, որոյ ելիր գլխաւոր վաճառատեղին է Զէյնան–Գափու Զէօմլէքճիլեր Թ. 29։

Տէմիրդաշուլեան Եղբարք

ԻԼԱՆ

Պիլ ումում ասաքիրի շահանէ ալայ վէ թասարուլարը իլէ տէրիսատէթի վէ թաշրատա պուլլնան խասթահանէլէր իչուն լիւզումի օրուպ միւպայեա օլընաճաք օլան 70 գրչէ Գընեղընա սոլֆաթօ իլէ 200 գրչէ Գընեղընա դապուղը վէ 50 գրչէ Ամիա Ֆէնիք վէ 4000 գրչէ միւնթէխապ քէնտէնտէն սաի թիւֆէնկլն թարիխի քարարընան իթիպարէն թէպլիմէ պէտ իլէ պիր այ միրուրինտէ արքասը պլընմաք պէ էսմանը թէպլիմինէ միւպէյլին վերիլէճէք մաքպուզ սէնէտի իւզէրինէ մուամէլէյի գալէմիյէսին պիլ իճրա լեվազիմաթի տաիրէսի վէզնէսին. տէն հէման վերիվէք չարթը վէ չէրաիթի սայիրէսիյլէ Օսմանը լիրասը 100 գրուշա օլարագ սոֆֆաթօնուն պէհէր գրչէսի 30125 վէ սիմ մէճիտիէ 19 գրուշա օլարագ գընա գապուղընուն պէհէր գրչէսի քրրք սոգուզ պուչուգ վէ սոսա ֆէնիքին պէհէր գրչէսի օթուզ իքի վէ թիւֆէնկին պէհէր գրչէսի օթուզ սէօրթ գրուշա թասիպ էօհանէսինէ օլուպ թըշրինի էվվէլը բուամինին ճնճը բաղար իրթէսի կիւնինէ գատար հէր կիւն միւնաքասասը պիլ իճրա եէվմի մէզքիւրտէ գարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթաէ թասիպ օլանլարը վէ 4 նճի ճումա իրթէսի կիւնիւ 0/05 թէնզիլինէ բաղիպ պուլունանլարը հարպիէ նէզարէթի լեվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէյէրի վէ կէլմէյէն զէվաթ օլառղը հալտէ իսէճէքլէրի թէնզիլաթը միւմգա վարագայի սահիհա իլէ տայիրէի մէզքիւրէյէ պիլտիրմէյէրի։

29 Իլուլ 96 2

Իզմիա վէ ֆէս ֆապրիգալէրի իչուն միւպայեա օլընաճաքը էվվէլճէ իրան օլընան վէ իլուլը բուամինին օնսէքիզինճի ըէնչէնպիհ կիւնի գարարը վերիլէճէյի էվվէլճէ իրան օլընան 30000 գրչէյէն 35000 գրչէյի քատար երգանմըշ խրանէսի եռաքարարընան թարիխի քարարընան իթիպարէն 21 կիւն սոնրա թէպլիմէ պաշլայուպ չէհրի 10000 գրչէսի թէպլիմ օլընարաք արգասը պլընմաք վէ 2500 գրչէսինէ պատէթ թէսլիմ մաքպուզ սէնէտի վերիլմէք վէ էսմանը մաքպուզ սէնէտինին վիրուսիլէ մուամէլէյի գալէմիյէսինին իսթամբնտա հէման լեվազիմաթ տայիրէսինտէն Օսմանը լիրասը 100 գրշ հիսասը իլէ վերիլմէք վէ տէրատատէթ կէտմիրլիկնտէ պիլ մուպէնէ թէպլիմինէ քատար քեսֆիֆէի մէսարիֆի իլէ ըէսմի կէսմիրլիկի միւթէահիւտինէ ատիա օրմաք չարթը վէ չէրաիթի սայիրէսի իլէ պիլ միւնաղ տատ պէհէր գրչէսի 37 գրշ 18 բարայա իթալիպի էօհանէսինտէ օլուպ թըշրինի էվվէլ բուամինին 2 նճի ըէնչէնպիհ կիւնինէ գատար պէհէր կիւն միւնաքասասը պիլ իճրա եէվմի մէզքիւրտէ գարարը գաթիսի իճրա օլընաճաղընան, իթամբնա թասիպ օլանլարը վէ 4 նճի ճումա իրթէսի կիւնիւ 0/05 թէնզիլինէ բաղիպ պուլունանլարը հարպիէ նէզարէթի լեվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէյէրի վէ կէլմէյէն զէվաթ օլառղը հալտէ իսէճէքլէրի թէնզիլաթը միւմգա վարագայի սահիհա իլէ տայիրէի մէզքիւրէյէ պիլտիրմէյէրի։

29 Իլուլ 96 1



ՍՈՒԹԻՆԿ ՇԻՐՕՐ

Յայտնի է որ երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը դրեթէ շարունակ փորի ցաւ. փոր, հարութիւն, ստամոքսի անհանգըստութիւն, անքուն մնալ, ջղայնագրգռութիւն և այլն կուենանն մանաւանդ ակռա հանելու միջոցին, և այս նեղութիւններն ալ աւելի կըստստականան ամառուան տաք եղանակին։ Սուտինկ Շիրօրը վերոյշեալ դժուարութեանց ամենուն ալ առաջքը կառնէ ու կը բժշկէ, որով երախան կը հանդչի ու կը զօրանայ յուրախութիւն մեծ իւր ծնողաց։ Գործածողները շատ գոհ են։ Ուղղակը կընայ փորձել. գլխն արժան է. նորածին երախայից կաթիլով կը տրուի, վեց ամիսէն վեր եղողին օրը երեք անուշի դրգալ. կը ծախսուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԱՆԿՈՂՆԱՐԱՆ ԿԱՄ ՄԱՀՃԱԿԱԼ

Ազնիւ և հասարակ քարեօրաներ երկաթէ փարայրէ, աժան գիներով կը ծախսուի Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և ընկերաց Ամերիկայի մաղազան։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԻՆ
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ